



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

206.2
U-78

980
981

206.2
U-78
1962

459

1532

010

~~1063~~

~~509.~~

ju

459

153

3. 3

2010

206.2
4-78 u.r.

280

817-10 ՆԱԵՐԵՂԻՐ Կ ԵՐՈՒՑ

ՍՐԲԱՅՆ ԸՈՎ ԶԵՆՆՈՒ ՄԿՐՏՉԻՆ

ՔՐԻՍՏՈՍԻ

Հ.Ս.Ս.Ր.Ա. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Հ.Ս.Ս.Ր.Ա. Публичная Библиотека
7/31-1922
Имени Мясникова
ՍՅՈՒՄԻ ԶԱՆԻ ԱՆԿ

ՍԻ ԵՐՄԻՆ



ԾԵՌՈՅ

ԳՆԻ

Ի ՏԳՈՒԱՆԻ ՎԱՍԳՈՒՐԱԳԱՆ ԱՐԾԻՈՅՆ

Ի Կ ԵՐԵՂ

1862

ՌՅԺԵ

2001

85 66071 (2007)

22

459
153

34090-4.2.

082
4-518

ST. PAUL, N. Y. P. O. BOX 100

ST. PAUL, N. Y. P. O. BOX 100

ST. PAUL, N. Y. P. O. BOX 100



ST. PAUL, N. Y. P. O. BOX 100

ST. PAUL, N. Y. P. O. BOX 100

ST. PAUL, N. Y. P. O. BOX 100

ST. PAUL, N. Y. P. O. BOX 100

ST. PAUL, N. Y. P. O. BOX 100

ST. PAUL, N. Y. P. O. BOX 100

ST. PAUL, N. Y. P. O. BOX 100

2010

ՉԼՅՆ ԲԵՐ ԲՆՈՅ

ՅԵՆԵՊԵՏԻ

ՀԵՆՐԻՍ ՔԳՆԵՆԻՍԻՍԿԵՆ

ԻՎԱՆՉԻՆ ՅԻՍՈՒՍԻ ԻՆԵՃԻՆ Ի ԾՆՈՒՆԴԸՍ
ԿԱՆԱՆՅ ՍՐԲՈՅՆ ՅՈՎԶԱՆՆՈՒ ՅԱՌԱԶ,
ԲՆԹԱՅ ԿԱՐԱՊԵՏԻՆ ՏՆՕՐԷՆՈՒ
ԹԵԱՆ ՈՐԴԻՈՅՆ ԱՍՏՈՒԾՈՅ



Ի ՏՊԱՐԱՆԻ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԱՐԾԻՈՅՆ

Ի Վ ԵՐԵՎ

1862

ԹՅԺԵ

« Մերոյ անմահ եւ երկնաւոր
սուրբ փեսային եկեղեցւոյ .
փեսաւէր եւ հրաւիրակ առաքելացոյ
հարօթին որդւոյ Թադուորին .
առ. Քրիստոս բարեխօսեալ
ժամն անձանց մերոց »

Էպիֆանիոս .

ՋԵԿՈՒՑՈՒՄՆ

ՋԵՐՄԵՌԱՆԴԱԳՈՅՆ ԽՆԴԻՐ

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅՆՈՑ

Թէ նամակաւ եւ թէ բերանացի թախանձանօք Ռուսաստանի ուխտ
տասեր ազգայինք վաղուց հետէ ջերմեռանդ սրտով կ'սնդրեն. որպէս զի
Քրիստոսի Տնօրէնութեան յառաջընթաց Սուրբ Վարապետին Երկնաքա-
ղաքացի վարուց հրաշափեայ նկարագիրը գոնէ իբրու դուզնաքեայ ճա-
շակ նուիրել նոյն վկայասէր ուխտաւորաց. որոնք Ռուսաստանի հեռաւոր
քաղաքներէն եւ մինչեւ անգամ երբեք չեն շնորհաստանի ծայրէն տաճանելի
ճանապարհորդութեամբ եօթն տարի շարունակ յիանակաց պահք պահելով
խումբ խումբ առնա տարի Վարդապետէն յառաջ կ'դիմեն Տարօնոյ մեծա-
հռչակ ուխտ Սուրբ Վարապետին :

Յիրաւի բայ Երուսաղէմէն ընդհանուր Հայաստանին միջում չկայ եր-
բէք Մշոյ Սուրբ Վարապետի վանուց նման մի սքանչելի Ռուխտը . որ կա-
րողանայ բոլոր Հայկազանց սիրաբ մագնիսի պէս դէպ ի յինքն բաշել .
Բայց այս մասին մեջը թէ որ բաղդատենք Տաճկաստանի քառապատիկ Ազ-
գայնոց մասէն շատ մեծ նշանակութիւնն եւ արժանաւորութիւնն ունի
Ռուսաստանի Ազգայնոց փոքր մասն ինչպէս յայտնի է իւրեանց խնդի-
րէն . թէ պատճառն ինչ է՝ չեմ գիտեր : մի առած կայ Հայաստանցւոց բե-
րան . զոր միշտ կ'սօսին թէ « Հեռաւորսւրբ՝ զօրաւոր է » : Եւ թէ այս-
պէս է . Տաճկաստանի ընդարձակ սահմաններում շատ հայազգի հեռաւոր
բնակիչներ կան ինչու ապա նոցա համար զօրաւոր չէ սուրբ Վարապետ :
Վասն զի այնքան չեն յաջակեր ուխտագնացութեամբ նոյն հանրահռչակ
ուխտը կամ գուցէ ոչ այնչափ եւս ջերմեռանդ հաւատով : Ուստի ստոյգ-
իտեւոր մասնաւորապէս ջերմեռանդութիւնն ունին Ռուսաստանի նա եւ
Պարսկաստանի Ազգայինները առ սուրբ Վարապետի ուխտն . որոնցմէ շա-
տերը նորա նշխարաց հրաշագործ դամբարան համբուրելով՝ ինչ որ խնդ-
րեն կառնեն Յիսուսէն Մկրտիչ ծառային բարեխօսութեամբ :

Անկեն աւելի զիս այս կ'ըզմայնէ, չեմ գիտէք աշխարհէն բարբառի
հեռացած այս անփառասէր ճգնաւորը Պաղեստինոյ Անուպատին մէջ
ինչո՞վ կ'ըջաղէր, արդեօք անդադար աղօթից մըսնունչներս՞ վ, եթէ սար-
սաւոր էրածիշա հրեշտակներուն քաղցրածայն երգերով: Այո՛ սուրբ
Վարապետ գիտես թէ երգատէր հոգի մի է եւ անխորապէս կ'սիրէ սակն
ազգի բանաստեղծները (աշուղները), ո՛հ, ինչ մեծ հաւատոյ սեւապան
կ'կառնէն այդ կոյր արքայաշայ շայ, Տաճիկ աշուղները, որոնք իրենց անկե-
զու նաւադարանները սուրբ Վարապետի կ'երկեցանին՝ վերայ կ'ընեն եւ
կրկար միջոցներով գիշեր եւ ցօրեկ երեսներն տապանաքարին վերայ քը-
սելով օջախ յորտ արքայաշայներով կ'երկէն եւ կ'թացեն սուրբ շիրիմը:
Բարեւ մի թէ չորցած ու ցամքած սկզբներն բանաստեղծութեան շը-
նարհներ կ'ըլլի, որով նաւադարաններ ճայն կ'առնեն, կոյր մտքեր կ'
լուսաւորին, համբ լեզուներ կ'բացուին, քնական ու աւակի առանց դրոյ-
րութեան մարդիկները կ'սկսին Համերօտի, Վերջ ի խոսի եւ Որասիտի պե-
քը թմոյրաբար երգել ու կ'անել եւ իրենց սրտաբուշիս երգերուն ժայ-
լաւ շարքաբար միշտ այս էն. Մաւրաւաւաւ էր Սուրբ Վարապետս:

Երանի՛ թէ սրտեհեղեթիւն լինէր, այդ օջախներուն ճաւղոսը եր-
գերը թուրցն ալ ժողուելով ու խմբագրելով՝ հրատարակէիք: որոնք
գիտեմ շատ փառաբանելի ճաշակ մի է մեր ազգային ուսուցիչական
մանուանդ Վաւաւաւաւանի մասին:

Ահա աշն ակարակին մէջը առ այժմ կ'հրատարակէիք: Երկարա-
դարացի Յովհաննէսին հրեշտակներուն վերայ քաղցրապարտեթիւն,
խնկ նայն: Մեծահոգի մ'նաւաւանին լրտնիս անուպատեթիւնը մտ
կուտակք ուրիշ սրտեհեղեթի ժամանակի: Վաւաւ, էմ յուսով Սու-
սիւն Հոյնիսանց հանդիսան համարուի այս դաւանաբանի նուէր, զոր
իջերմ, որտե կ'ընծայի Վաւաւաւաւաւան Արմաւին:

Մ, Վ, Խ

ԱԵՏԻՔ ԵՒ ՍՔԱՆՁԵԼԻ ԾՆՈՒՆԴ
ՍՐԻՈՅՆ ՅՈՒԱՀՆՆՈՒ ՄԿՐՏՉԻՆ

Չէ յարուցելալ Տէժ Ի Տնուդս
խանանց քան Յովհաննէս Մկրտիչ
Ա-Է-Գ-Մ

Մինչդեռ անատուածութեան դարը կ'ախրապետէր
բոլոր արեգերքը, մինչդեռ վեց հազար տարուան երկար
գիշերով մարդիկներ խաւար կ'ապաշտութեան մէջը կը
դանդաղէին. մինչդեռ հարած աչքերով դէպ ի արեւելք
դարձած կապատէին յուսով թէ երբ պիտի ծագի երկնից
հորիզոնէն այն խնամալի Արեւը որ աշխարհ պիտի լուսաւո-
րէ, ահա Հրէաստանի մութ երկրում կերեւէր յանկարծ
պայծառ ճաճանչափայլ արուսեակ մի, որ իբրեւ արշալոյս
աւետիս կուտար թէ ահաւասիկ մտէ եւ պիտի ծագի փրկ-
կութեան արեւը: Երկնից անվախճան թագաւորութիւնն
պիտի յայտնուի ու մեծ պատերազմ բանայ աշխարհիս
իշխանին հետը. որուն համար ես իբրեւ դեսպան դրկուած
եմ որ լեռները ու բլուրներ հարթելով պատերազմի դաշտ
բանամ նորա առաջը:

Սոյն անմարմին զինուորներու դասապետ Գարբիէլը
ինչպէս որ հանդերձեալէր իջնալ Նաղարէթ եւ Սուսին ա-
ւետիս մատուցանել նախապէս կերեւէր Չաքարիաս Գա-
հանային որն որ տաճարին մէջը Ատուածոյ սեղանին ա-
ռաջ կեցած կրտսաւորէր խնկարկութեամբ եւ անձայն

աղօթից միմուռնը սրտին բուրվառով կբուրէր դէպ երկինքը՝ Տէր, մինչեւ երբ մնամ անդաւակ, մինչեւ երբ ես նախատանայ նշաւակ դառնամ, ահա ծերացած մահու գերեզմանին կմօտենամ, ո՛հ, անորդի պիտի մեռանիմ ։

Իսկ աւետաւոր զուարթուն Գաբրիէլ ձայն քաջալերութեան կուտար. Մի երկնչիր, մի վհատիր, Չաքարիսս, քո խնկանուէր աղօթից ծուխ մինչեւ երկինքը բարձրացաւ աւետիս քեզ, ուրախ եղիր, մի որդի պիտի ծնի քեզ, նորա անունը Յովհաննէս դնես անոր սքանչելի ծնունդը բոլոր Հրէաստանին խնդութիւն է. դեռ մօր արգանդէն աշխարհ չեկած՝ սուրբ հոգւով պիտի լցի. հանդերձեայ Քրիչին առաջը Եղիայի նախանձաւոր հոգւով պիտի ընթանայ. անցած և մեռած Նահապետներուն եւ հայրերուն աներկբայ հաւատոյ սիրտը՝ պիտի դարձունէ կրկին դէպ ի թերահաւատները Հրէից անհաւան ժողովուրդը նախաքարոզ դաստիարակութեամբ պիտի համոզէ ու պատրաստէ Տիրոջ գալստեան համար ։

Այս անակրնկալ խօսքերէն տարակուսելով կամիչի Չաքարիսս ու կպատասխանէ թերահաւատութեամբ. Ի՞նչ ապացոյց կայ այդ սքանչելի նախագուշակութեանդ եւ ի՞նչպէս հաւատամ, մինչդեռ ծերութիւն զիս թափերէ այրական ու ժէն ու Եղիաթեթ կինս ալ պառաւցած անցուցերէ որդեծնութեան օրերը ։

Չաքարիսս Չաքարիսս, իբրեւ թերահաւատ պատասխան կուտաս Աստուծոյ հրեշտակին, ես Գաբրիէլն եմ որ միշտ աստուածպետական Աթոռին առաջ կեցած կրսպաաւորեմ նորա մեծութեանը. հաւատա ես երկնից

պատգամաբերն եմ, բայց քեզ պատուհաս կ'ընենմ, որ առ
ժամանակ մի համրանաս մինչեւ կատարուին աւետարելիս
խօսքերը. ապա թող բացուի պապանձեալ լեզուիդ կայ :

Աստուածախօս Քահանայն հրեշտակէն օարտափամ աս-
ճարէն գուրս կելնէ լեզուն բոլորովին կապուած կ'տեսնայ
ժողովուրդ և կ'մանայ ստոյգ թէ Աստուածային իմն տեսիլ
տաճարին մէջ երեւնալով զարհուրեցուցերէ Չարարիտար :

Այսպէս ասա երբ նորա պաշտաման օրերը կ'զերջանայ
տունը կ'դառնայ Չարարիտաս Քահանայն եւ այն օրերէն
յետոյ կ'յղանայ Եզրիտաբեթ : Կ'պատմէ սուրբ Աւե-
տարան թէ մինչեւ հինգերորդ ամիս Եզրիտաբեթ իւր
անձը կ'թագուցանէր աեսնողներէն : Չարմանք, մինչ
ամլութիւն կամ անդաւակուի նախատիւք համարուած
էր Հրէական ազգին սուաջը. մի թէ յղանալ կամ որդի
ծնանիլ ամօթ էր. ոչ ապարէն աւելի պարծանք էր, մանա-
ւանդ երբոր Երկնապարգեւ աւետոք էր այն յղա-
ցումն : Եզրիտաբեթ կ'թագուցանէր զինքն մինչեւ իւր
ազգականն Մարիամ զԱստուածորդին յղանալով այցե-
լութիւն զայր իրեն :

Այն, նա որ հանդերձեալ էր երեսուն տարիէն զկնի
իւր հայրենի Գալիլեայէն դէպ ի Յորդանան գիմելով
Յովհաննէս ծառայէն մկրտութիւն խնդրել : Այն անօրինակ
սքանչելեացս, տակաւին չճնամ մայրենի սաքով Տէրը
արգանտին մէջ փակուած իւր ծառային այցելութիւն
կուգայ : Իսկ հանեատափայլ Եզրիտաբեթը շնորհալից
մեծարանօք իբրեւ աղախին մի կ'գիմաւորէ Տիրոջ
մօր եւ Աւետին իւր սրտին անպատում բերկրանք դողդո-

Զուէն շրժուէքներով արտայայտել — օր, ուստի է ինձ այս
 գի եկեացէ Մայր Տեառն իմոյ առիա : Մարիամ Առաքին
 ողջուէարեր ձայն Եղիսաբեթի ախանջէն թափանցելով
 կազդէ Յովհաննէս ծառային, որ խաղաղով խայտալով ու
 ճխալով մայրենի անձկալայր արգանտին մէջ Յորդանանու
 խոնարհական խօսքերը կ'նախարանէր — Տէր, ինձ պարտէ
 մինչեւ Գալիլեայի Նազարէթ քո Աստուածու թեան օտր
 դիմել, դու այդչափ հեզանալով գեպ իքո ծառայն
 կ'դիմես :


Մինչդեռ տակաւ տակաւ կ'ճտեմար իններորդ ամիսն
 եւ անժուժարար կաճապարէր արեւէն յառաջ ծագիլ
 առաւօտեան արուսեակը ու նախընթաց իննել Աստուած-
 որդւոյն անօրէնու թեան, ժտելով կ'խնդրէր Եղիսաբեթը
 ազգակից Աուսէն անդի տալի դառնալ գեպ ի Նազարէթ,
 որպէս զի ծառայի ճննդեանն չկայցէ Տէր իբրեւ սպա-
 սահարկու : Դեռ խելամուռ չէր Եղիսաբեթը Տիրոջ խո-
 նարհութեանն, որ աշխարհ պիտի դար ապիկար մարդիկ-
 ներուն պաշտօն տանելու համար, կամ իշնորհս յաղթող
 ու հաւատարիմ ծառաներուն՝ արքայութեան սեղան
 կազմելու ատենը դօտի ամելով պաշտել զանոնք :

Մինչդեռ լուսին կ'լրանար իններորդ ամսոյն Եղի-
 սաբեթին ամուլ եւ անբեր արգանդը իբրեւ հրաշանո-
 րոգ գարունը կ'բողբօջէր ի վեր ծագիլի շնորհարոյս, ող-
 շամբ կ'ձնանէր զՄկրտիչ մանուկն : Այս նորալուր համ-
 բաւը կ'հնչէր բոլոր շրէտուանը, ազգականք ու բա-
 րեկանք կ'փութային ի շնորհաւորութիւնը : Արսիտու-
 թիւն եւ սուգ ի միասին խառնուած էր . օրհնութեան

Հնորէք եւ պատիւ միանգամայն կերեւէր . Ապրապետիկ
կուշար , Եղիաաբեթ կցնծար , ու կենդանի լեզուով
կփառաւորէր զԱստուած . Ո՛հ , Չաքարիաս միայն դեռ
շուարած ու ասիշած համբայցած լեզուով նշանացի կը-
խօսէր բարեկամներուն հետ :

Քայց այս տրամու թեան առիթ շուտ կ'իերջանար ,
այն ինչ ութներորդ օրը թլպատու թեան հանդէսը կը
կատարէին , իերին ազգեցու թեամբ կ'սնդրէր Եղիաա-
բեթ իւր նորածին մանկան անունը Յովհաննէս կոչել ,
իսկ բարեկամները կտախէին թէ քու ազգիդ մէջը այդ
անունը երբէք չիկայ . Թող տանք այս որոշումն Չաքա-
րիաս քահանային թող ինքն ինչպէս կ'կամի՝ այնպէս լի-
նի . Իսկ նա որ անկարող էր բնաւ իւր սրտին փափաքը
լեզուով արտայայտել , մի տախտակ խնդրեց նշանացի
ձեռքով որուն վերայ գրեց ու վճռեց թէ Յովհաննէս է
անուն տղայիդ : Ո՛վ անլուր եւ անօրինակ քանչէրեացս ,
արդարեւ Յովհաննէս անունը որ Հնորէք կ'թարգմանի .
բացեց նոյն ժամայն իւր հօր պապանձեալ լեզուն .
որով նա ինքն եւս Եղիաաբեթին հետ ձայնակցելով
սկսեց օրհնել ու փառաբանել զԱստուած : Այս հրա-
շարուր համբաւ ուր որ հասաւ , զարմացուց եւ
Հրէաստանի ժողովուրդը ամէնն ալ սքանչանալով կ'խօ-
սէին թէ ի՞նչ պիտի լինի մանուկս այս : Ստոյգ եւ ճշմա-
րիտ գիտէր Օաքարիաս թէ ինչ պիտի լինի , ուստի սկսեց
իրբեւ Մարգարէ գուշակելով բարբառել — Գու մա-
նուկդ իմ հրաշածին , դու Բարձրելոյն Յիսուսի մարգարէ
պիտի կոչուիս , դու իբրեւ յառաջընթաց Ապրապետ պիտի

երթառ նորա առաջը ճանապարհներ պատրաստեա . դու
 իբրեւ արշալուսոյ պայծառ աստղ աւետիս պիտի տաս Հրե-
 աստանի աշխարհին այն արեւուն համար , որ միանգամայն
 երկնից քարձուէքէն եւ Քեթիէհէմի խոնարհ մարէն կը
 ծագի ու կ'լուսաւորէ անպատուածութեան ստուերին տակ
 նստած հանուր մարդկային ազգը . դու Յովհաննէս որ-
 դեակ իմ շնորհածին , քու հօրդ համրացած լեզուն բա-
 ցիր , աճիր ու զօրացիր գնա՛ այսուհետեւ Հրեաստանի ան-
 հաւան ժողովուրդին քարոզէ . որպէս զի խառատութի
 համրացած լեզունին բանան անապաշխար Մաքաւորներ
 ու մեղաւորները իւրեանց ամբարշտութեան մեղքերը խոս-
 տովանին . մաքրէ ու կազմէ Տիրոջ համար ամբիժ ժողովուր-
 դը . այս իսկ է միայն քու կարապետութեանդ պաշտօնը :



ԱՆԱՊԱՏԱԿԱՆ ԿԵԱՆՔ ՅՈՒՆԱՆՆՈՒ ԿԱՐԱՊԵՏԻՆ
 ԷՒ ՔԱՐՈՋՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ Ի ՅՈՐԴԱՆԱՆ

Ոչ միայն արեւելեան , այլ եւ արեւմտեան իկեղե-
 ցւոյ մէջը տարակուսական խնդիր մի է . թէ արդեօք
 Յովհաննէս Մկրտիչն որ վեցամսեայ ժամանակաւ միայն
 երկրագոյնէ էր քան զՅիսուս ու մանկութեամբ հա-
 սակակից էր Քեթիէհէմի մանկանդ՝ ինչպէս ազատեցաւ
 Նոյա անհնարին կատարած էն : Նախնեաց հիմաւանդ պատ-
 մութեան զրոյքը շատերուն հաւանական է , այս մասին



Թէ այն ինչ նենգաւոր Հերովդէսին մանկակոտոր դա-
 Տիճները Բեթլէհէմի ամբողջ սահմաններ արիւնով կը
 ներկէին կոտորելով միանգամայն երկու տարուէ ի վար
 կաթնիկեր երախայներ, Եղիսաբեթն իւր տարեկան Մկր-
 տիչ մանկիկն առած դէպի ամայի Անապատներ կ'փախ-
 շէր. քայց անագորուն դասիճները ետեւն ընկած Յով-
 հաննէս կ'խնդրէին. որուն սքանչելի համբաւ տարածո-
 ւած էր համուր Հրէաստանին մէջը, Թէ այն նորածին
 Թագաւորին Պարապետ կամ գեսապան՝ Յովհաննէս Մկր-
 տիչն է, որ նորա առաջը երթալով դար ու փոս ճանա-
 պարհները պիտի հաւասարէ, կամ նոր ոմն նախան-
 ճաւոր Եղիա աշխարհ եկերէ օրինազանց անզգամները
 յանդիմանելու համար : Այն, այս կարծիքը յարմար էր
 Յովհաննէսին համար. որն որ հանդիւժեալ էր երե-
 սուն տարիէն զկնի վերջին ամբարտաւան եւ օրինա-
 մերժ Հերովդէս յանդիմանելու : Ուստի դասիճները
 սատանայի ազդեցութեան ձին հեծած ստիպաւ կ'խնդ-
 րէին զայն : Եւ մինչդեռ պարտաւ Եղիսաբեթ կանուցի
 տկարութեամբ պարտասօժ ու խանջած քարի մի տակ
 նստելով շունչ կառնէր՝ աշեր վերցուց նայեցաւ որ ինչ-
 գաժան դասիճները արիւնսամած սուր ձեռքերովն կու-
 գան վազէ վազ : Պանչեց Եղիսաբեթ իխորոց սրտէ, Տէր
 ապաւէն իմ, դու քեզ ապաստանելոց համար հաստատուն
 վէճ ես, քո ամինադօր հրամանաւ պատառէ այս վէճը
 Թող քո աղախին Եղիսաբեթին պատսպարան լինի մինչեւ
 անցնի անօրէնու թիւն : Երկիւղածներուն աղօթքը արա-
 դապէս կ'հասնի երկինքը, Աստուած նոցա խնդիր շու-

կկատարէ . խնայն կ պատանի ահագին ապառաժ վէճը
 Եղիաբեթ եւ իւր մանկիկ մէկ տեղ իր ծոցին մէջ կառնէ
 մինչեւ կանցնին ժանաբարոյ դահիճներ : Արդարեւ
 այս հրամանակատար վէճը Հերովդէսի դժեղակ սրտին
 մեծ յանդիմանութիւն էր , որուն սիրտ անգթութեամբ
 այնչափ խտացած էր իբրեւ ապառաժ բար . մինչեւ
 այնքան երկամեայ տղոց կարմիրիկ արիւն սպիտակ կաթին
 հետ խառնելով մայրերու գերկը ողողեց . ճիչ , աղաղակ ,
 փայնասուն մինչեւ երկինք հասաւ , բայց նորա սիրտը
 դեռ չզիջաւ դժոխային կատաղութենէն . Փրկչին արեան
 էր ծարաւած . չսպասեց մինչեւ դպրաց ու Փարիսեցւոց
 հետը խաչ հանելով զՅիսուս՝ խմէր ու գովանար արիւ-
 նասանձ ընձու պէս :

Բայց մի թէ կ թողնէ Աստուած , որ ամբարիշտը
 իւր ամբարշտութիւնը շարունակէ միշտ . չէ չէ , Արդարը
 Հերովդէսի որոգայթէն կ փրճանի , եւ նորա փոխան
 ամբարիշտը կ մատնուի , թէ եւ անագան :

Վոյն աւանդապահ վէճը Աստուծոյ հրամանաւ կը
 բացուի դարձեալ . Եղիաբեթ եւ Յովհաննէս ողջամբ
 դուրս կելնեն . երկուց Հրեշտակը կասէ Եղիաբեթին ,
 Յովհաննէս առըր մեզի , դու դարձիր գնայ տունը , Տէրը
 մեզ հրամայեց , որ մեք զանի այս Անապատիս մէջը իբ-
 րեւ ծնող , հայր , մայր , դայեակ , պաշտպանենք ու դաս-
 տիարակենք մինչեւ դարգանայ ու զօրանայ կանչէ այն
 Եսայեան հզօր պաագամբ , Չայն բարբառոյ յանապատի :
 Դու ապահով եղիր , Աստուծոյ ձեռք յանձնուած
 գառնիկդ Յովհաննէս , կարող չէ յափշտակել եւ ուտել

Հերովդէս գայլ Իսկ Եղիաօրեթին համար թէ եւ անհր-
 նային զաւ էր իւր անգրանկամին ամենասիրեիլ որդ-
 եակը թողուլ այնպէս ամայի Անապատին մէջը ու գիրկ
 թափուր տունը զառնալ . սակայն իրբեւ խնամուել կին
 խելամուտ լինելով սրտին մէջը, թէ իւր մայրու թէ ան պաշ-
 տօն մինչեւ այն կէտն էր եւ ինչ որ ծնայական պար-
 տուց խնամքն էր՝ զայն ինքն սակաւ ժամանակի մէջը
 լրացուց . կամակար յօժարու թեամբ թող տուաւ իւր սի-
 րուն Կարապետիկ որ մայրարու ի անու շակ կաթին անդը՝
 Հրեշտակները երկնային հացով կերակրեն զինքն :

Լ. յիստ հեռեւ Յովհաննէսի օրօրոց անապատն էր սանտու
 դայեակ Հրեշտակներն էին, մեղմիկ սուսափաւն անաստա-
 խիտ ծառոց իրբեւ մայրենի աղուածայն օրօր կ հնչէին .
 իբու ն անու շ կ ննջէր մամկիկ անխաց եւ լռիկ . ի՞նչ էր այն
 փափկիկ մարմնոյն ծածկոյթ կամ խանձադուր , արմաւ-
 ենեաց կանաչադարդ անբուռնիք ի թէ երկինքէն իջած կայ-
 լակ կայլակ մարդ արտասխայլ շաղերբ . բայց թէ՛ կ էր ի թէ մայ-
 րախնամ Հրեշտակին թէ երբ իրբեւ զբան կ պահպանէր
 զինքն արեւէն եւ զբաւն , զլ մն էր իւր կակուց զգրկարան ,
 որ փայտու շ եւ խորհրդաւ որ էր , այն միակն ծոց կ սնան-
 նէր անկաւ ասկաւ որ հանդ երձեալ էր Բեթէ հէ մի մարէն
 գրոյիլ ու բոյոր աշխարհ ծածկել : Եւ ուսու մն , ոչ փար-
 ժապետ , ոչ գարու թիւն , ոչ Քերական , ոչ Հեղ երէն , ոչ
 Աստուա . հարա ուր էր ուսու զիչ կամ դաստիարակ . Մոյսն ա
 սաքին կողմը նստած , հին ստուերական օրէքնէր կար-
 վեցէր , Յիսուս զ իսու ն կողմ կեցած Աւետարանին լուսա-
 փայլ պատգամները , ան անց սերտելոյ ուսու հին եւ նոր

կտակարան, առանց գրելոյ վարժեցաւ իբրեւ արագագիր
դպիր, երթալով երթայր ու կ զարգանար լմաստութեամբ
առանց մարդկային դատարարակութեան : Աեանք նորա
համանման էր Եղիային խոշոր ու խստմբեր, անպաճոյճ էր
մարմնոյ հանդերձր ուղտու ստեւէն հիւսուած . չեմ գիտեր
իւր, եթէ Հրեշտակներու մատներով . պինդ կապերէր
մէջքին մաշկեղէն գօտի մի . որպէս զի իբրեւ պատրաս-
տական ծառայ պաշտէ Տիրոջ Տնօրէնութիւն կամ ինչպէս
Հարսկան կ երգէ իբրեւ ճշգրիտ օրինակ մարմնոյ մեռե-
լութեան : Գրեթէ անձաշակ իբրեւ Հրեշտակ մի միայն
լոկ սակաւիկ մի վայրենի մեղրով ու մարտխով կ շատանար,
կուտէր միայն ապրելու համար, կ խմէր միայն ծարաւն
անցնելու համար . գինի կամ օղի չմտաւ բնաւ նորա բերան
ինչպէս աւետիս տալու օրը Գաբրիէլ պատուիրէր :

Այսպէս կենցաղավարեցաւ Երկրին վրայ Երկնաքա-
ղաքացին Յովհաննէս մինչեւ երեսուներորդ տարին .
եւ ահա Աստուածային բանը ազդեց նորա սրտին . ալ բա-
ւականէ այդ ամայի անապատիդ մէջը անձանտթ մնաս .
դու Աստուածորդւոյն Արարպետն ես յառաջընթաց իջիր
Յորդանան, ահաւասիկ Աստուծոյ հեղիկ գառն պատրաս-
տուած է Գալիլեայէն դէպ ի քեզ պիտի դիմէ : Նոր Եղե-
այն Յովհաննէս դոգ թէ նախանձաւոր սրտմտութեամբ
լեցուած խոր անապատէն ինչպէս Քորէբ կամ Ատրմելոս
լեռնէն ամպի նման որոտալով կիջնայ Յորդանան . իրեն
համար դուշակուած Եսայեան պատգամ բերան առեր է
կ կանչէ . Չայն բարբառոյ յանապատի պատրաստ արա-
րէք զձանապարհս նորա եւ այլն . ձեռքն ալ բար-

կուժեանս սուր տապար առած կտպառնայ: Հրէաստանի
անպտուղ անտառներուն: Այս ահագին ձայնէն սարսե-
լով ամէն մարդ կշարժի, գիտես թէ Արապատէն
ելած անգէն անգլինու որ ձգնաւորի մի ձայն Օգոս-
տոս կայսերի հրամանէն աւելի զօրաւոր է: Այն զօ-
րաւոր է, ուր տեղը Աստուծոյ մարդ եւ առաքինութիւն
կը հրամայեն՝ ակնածելով կ լռեն աշխարհի սէգ եւ ա-
հարկու թագաւորները:

Յովհաննէսի ապաշխարութեան ազդարար փող Հրէաս-
տանի բիւրաւոր ժողովուրդներ Յորդանան գետին եզեր-
քը կժամէ: Մաքաւորներ, մեղաւորներ, Փարիսեցի-
ներ, Սատուկեցիներ, զինուորներ, աւաղակներ գրկողներ,
առ հասարակ. երամ երամ կ զիմեն, երթանք տեսնանք
ի՞նչ է այս ձայն եւ ի՞նչ պատգամներ կ խօսի Աստու-
ծոյ կողմէն. միք գիտեմք ի նախնեաց անտի, մեր
հին Մարգարէներէն եւ ոչ մէկ կարողացաւ ամբողջ
Հրէաստանի ժողովուրդը այսպիսի քարոզութեամբ շար-
ժել դէպ ի ապաշխարութիւն: Ի՞նչ կտեսնան. յի-
րաւի նորահաս Նդիեա մի մեռելութեան մտկեակը
թիկան վրայ ձգած ահագին ձողնաչափ գաւազան
մի ձեռք. սրունքներ բաց Յորդանանու ափին վերայ
իբրեւ բեմին վերայ եկած բարձրագոյ ձայնով կը-
կանչէ. Ապաշխարեցէք ապաշխարեցէք. զի մերձեալ
է երկնից արքայութիւն: Ապաշխարեցէք, Փարիսեցիք
դուք, որ միայն արտաքուստ արդար կ կերպարանիք
մարդիկներուն առաջը. բայց Աստուած կարող չէք խարել
որ ինքն իբրեւ լոյս ձեր սրտի խաւարին գործքէն պիտի

յայտնէ եւ յանդ իմանէ : Ապաշխարեցէք, Մաղուկեցիք,
 իժերու ծնունդներ, դուք որ չիք յարուժիւն կ'ստացա-
 պեակք եւ կ'գաւանիք : ասա կենդանեաց եւ մեռելոց
 միանդամայն Աստուած աշխարհ պիտի դայ, մեռելնե-
 յուն յարուժիւն պիտի ապ, հանդերձեալ դատաւանք
 պիտի քարոզէ, դուք ձեր անհաւատութեամբ պիտի
 խայտառակիք : Ապաշխարեցէք, Մաքսուսներ, դուք որ
 ամէն շարերէն աւելի գէշ համարուած էք, Քիտոս զձեզ
 շատ պիտի սիրէ որ նա ինքն եկած է մեղաւորներ կանչել լու-
 համար, միայն թէ դառնաք սրտով սա Աստուած եւ սիր
 գրկերէք զձարէք մոխարէն :

Ապաշխարեցէք, սա հասարակ ժողովուրդք Հրէաս-
 անի, դուք որ Մեծաշին դարանեան կոպակք, մի կարծէք
 որ արքայական շքով, զինուորեալ բանակով կամ յայտնա-
 կան կառքով Արուսաղէմ պիտի մտնայ եւ Հռոմէացի իշ-
 խանութեան լուծք ձեր սրբանոցէն խորտակելով զձեզ
 ազատ պիտի կայուցանէ աշխարհի տիրապետող բռնու-
 թեանն չէ, այդ յոյս սնտախէ, շքիկնի թէ խարսկէ Մեծա-
 ւային դարուստը անտրիմակ խոնարհութեամբ է, նայեցէք
 ասա յոյզ կուտամ ձեզ թէ ինչպէս հեղ դառնի նման
 գէպ ինձի կու դայ, մկրտից կու գէ, որ բնու մեզք չու ին :

Չեզ կասեմ, այսուհետեւ ապաշխարութեան պատ դներ
 բերէք, ձեր պարծանքի բնուանայն է թէ որ պարծենաք
 Աբրահամու արմատին վերայ մինչդեռ դուք հին եւ ան-
 պատու տերերէնէք էք : Ահաւասիկ Աւետարանիէ քարոզ-
 ութեան աստար մարդկեցէն, ճառերու սակ պիտի
 արուի պատրաստ, ամէն անգամեղ ծարեր մտնալու յո

լինելով՝ կրակին մէջ պիտի ձգուին : Անաչառ դատաստանին
հեծանոցը Մեսիային ձեռքն է , եկեր է աշխարհիս կայե-
րը մաքրելու համար . իրեն հաւատացող սուրբ ցորեան-
ները պիտի ժողովէ արքայուն շտեմարանին մէջը . իսկ անհա-
ւատները իբրեւ յարդ պիտի այրէ դժբաքի անշէջ կրակով :

Գրեւէք , ես Մեսիայն չեմ , ճշմարտութեամբ կխոստ-
փանիմ ձեզ . Մեսիայն Աստուծմէ է երկինքէն կուգայ , ես
մարդ եմ : Չաքարիայի որդին անսպասին մէջը հրեշտակ-
ներու խնամատարութեամբ մեծցած , ես՝ միայն լոկ ջրով
կ'մկրտեմ զձեզ . բայց այն որ ետեւէս պիտի գայ , շատ
զօրաւոր է . քան զիս նա պիտի զձեզ մկրտէ սուրբ հոգւով
ու սիրաբոց հրով :

Աս երկնաւոր Հօր հարսնախօս հրաւիրակն եմ , եկայ
որ զձեզ խօսիմ իբրեւ կոյս մի անարատ նորա որդւոյն Յի-
սուսի համար . եթէ հաւանիք , ահաւասիկ բաց է եկեղե-
ցոյ առաջաստը . պատրաստ է հարսանիքը , մտէք հա-
մարձակ . դուք միայլ եւ այլ պատճառներ բերելով այս
մեծամեծար հրաւիրանքէն ետ մնաք ու զրկուիք : Դուք
Աստուծային կոչման անդրանիկ ու արժանաւոր ժողո-
վուրդն էք եւ ընտրեալ ազգ , ձեզի համար եկած է իսկ
ազատարար Փրկիչ Մեսիայն : Աւրեմն դարձէք եւ ըն-
դունեցէք զինքն , մի թողուք որ օտարախորթ հեթանոս-
ները ձեր սեփհական փառքը յափշտակեն :

Ասային սորա համար է որ ձեզ յառաջուց ձայն կուտայ
— Դարձիր Յակոբ , բուն հաւատով բունքու Փրկիչը .
Թերահաւատ թուլութեամբ մի թողուր որու լիշներ խլեն
քու ձեռքէդ այդ երկնապարկ եւ կենդանի հացը . անօ-

Թի հեթանոսներ կշտապինդ վայելելով յագենան. դու եւ
քո որդիքներդ անհաւատարմութեան մէջ մնալով սովալը-
լուկ մեռնիք — :


Արդ էք Աբրահամու, Թող էք այդ յամառ խտտարը-
տութիւն. ձեր նախնի շարց ջերմեանդ հաւատոյ սէրն
ստացէք: Սամակոյ ամբարտաւանութեամբ լեռներու
եւ բլուրներու պէս մի բարձրանաք. այլ խոնարհեցէք
մինչեւ իգեախն եւ Մեսիային ոտքին հողը լիզեցէք, որ նա
ձշմարիտ Աստուած գոյով՝ մարդուն ապիկար կերպարան-
քով խոնարհեր է երկիրը. որպէս զի զձեզ մինչեւ եր-
կնքը բարձրացնէ :

Գարձեալ՝ Թող լցիին հաւատոյ պարզմտութեամբ այն
դ ժոխային խորամանկութեան եւ կեղծաւորութեան խո-
րագոյն ձորերը, որուն չար մշակ եւ հեղինակ դուք էք
իժաճնունդ դպիրք եւ փարիսեցիք, այն դուք էք որ Աս-
տուծոյ օրհնեալ պարզամիտ ժողովրդեան առաջը ահա-
գին վիհեր եւ խորխորատներ կ բանաք, դուք Աստուծոյ
ճանապարհին վերայ կեցած դարանամուտ աւազակ-
ներն էք, դուք այնպէս կ ձեւանաք թէ Աբրահամու կամ
Իսովսիսի հարազատ օրինապահ որդիքներն էք, չէ՛ չէ՛. ձեր
կեղծաւորութեան ժանտահամ պտուղները կը ծանուցա-
նեն թէ դուք նոցա անհարազատ եւ օրինազանց դաւակ-
ներն էք. այնչափ խորամանկ կեղծաւորութեամբ կ ձե-
ւանաք ժողովրդեան առաջը մինչեւ կարծիլ կուտաք թէ-
դուք կ սիրէք ու կ պատուէք Աբրահամ եւ Իսովսէս ու
միշտ նախանձաւոր հոգւով վրէժխնդիր էք օրէնքներու ն-
բայց այսպիսի չարագիւտ հնարքով օրէնքն ալ Մես-

եայն ալ պիտի մերժէք չարաչար • Չեր ամէն խաւարին
 դորժքերը իմ նուազ ճրագի լուսով ես այսչափ միայն
 կարող եմ նկատել • Իսկ Մեսիայն որ անաղօս լոյս է
 եւ ծածկագէտ Աստուած պիտի ծագի իբրեւ աշխար-
 հալոյսարեւը • Իւր Աւետարանին թափանցիկ ճառագայթ-
 ներով պիտի մանէ մինչեւ ձեր սրտի գաղտնի խորշերուն
 մէջը, ամեն խաւարին դորժքեր դուրս հանելով մերկա-
 պարանոց պիտի խայտառակէ զձեզ աշխարհին առաջը •

Իմ փոքրածաճանջ ճրագին լուսով ձեզ այսչափ
 քարոզելէս յետոյ՝ սակաւիկ մի պահէն պիտի շիջանիմ իբ-
 րեւ մահկանացու մարդ, նախնիքներուս պէս պիտի լռեմ
 գերեզմանին ծոց • Յովհաննէս Մկրտիչ կերթայ, անմահ
 Մեսիայն պիտի գայ, ճրագը կ'մարի պայծառ ջահ կվառի,
 արուսեակը կաղօտանայ, Արեւը կ'ծագի • Թէ ականջ ու-
 նիք լսեցէք ու դիտեցէք Տիրոջ ճանապարհը • Թէ անհա-
 ւատ էք կոյր մի լինիք, ձեր իսկ աչքով տեսէք Մեսիային Աս-
 տուած ազօր սքանչելիքները • Թէ վկայութիւն կ'տնդրէք,
 Յորդանանու եզերքը կեցած դիտեցէք, բաց ինձմէն, որ
 երկրէն եմ ու երկրէն միայն կ'վկայե՛մ պիտի լսէք նա-
 եւ երկնիքէն եկած հրաշաճայն վկայութիւն հօր Աս-
 տուծոյ • Դա է սիրելի իմ, ընդ որ հաճեցայ, դմա լու-
 արութ • պիտի տեսնա՞ք ակներեւ Յիսուսի տնօրէնութեան
 հրաշագործող սուրբ հոգին նորա գլխուն վերայ իջած
 հօր Աստուծոյ վկայութիւն կ'հաւատարմացուցանէ •
 Եթէ դեռ այս նորասքանչ հրաշքներէն չհամոզուած
 երկբայելով կ'թերահաւատիք քրիստոսի ճշմարիտ Աս-
 տուածութեան վերայ՝ զնի հապա փորձիչ սատանային հետ

դաշնակցելով. ելէք փորձութեան լեռը . ահա նա ինքն
մկրտութենէն յետոյ սուրբ Հոգիէն պիտի վարի անա-
պատը . քառասնօրեայ պահոց պնդութեամբ զրահով
սպառազինած իջրեւ տկար մարդ պիտի մարտնչի ու
յաղթահարէ իւր ճակատամարտ փորձիչ թշնամին :



ՄԿՐՏՈՒԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ԵՒ ԳԼԽԱՏՈՒՄՆ

ՅՈՒՏԱՆՆՈՒ ՄԿՐՏՉԻՆ Ի ՀԵՐՈՂԻՒՍԵՆ

Ահա Գալիլեայի օահմանէն դէպ ի Յորդանան կի-
ջանէ երեսնամեայ, շնորհաշուք կատարեալ սուրբ ելի-
տասարդ մի . արեխ հաղած, կերպարանք շինականազգեստ
գնաւք համեստ . առանց իշոյ, առանց Առաքելոց, և
առանց Ուսանեայի . Եզեկիէլեան չորեքդիմի կառաց
հրացորակ անիւներով միշտ ընդ օդս ճախրող, նի, հետեւակ
կ.քայէ մինչ ի Մկրտիչ ծառային մօտ : Ատենայ Յովհան-
նէս եւ մատամբ ցոյց կուտայ ժողովրդոց . նայեցէք տե-
սէք ահա կուգայ Աստուծոյ հեղ եւ խոնարհ գառն, որ
հանդերձեալ է բոլոր աշխարհի մեղքերը բառնալ :

Մինչդեռ Տէրը կ'մօտենայ ծառային՝ այսպէս կառա-
ջարկէ, — Ե՛կ Յորդանանու գերահրաշ աւազանիս
Մկրտիչ Քահանայ եւ սպասաւոր, ե՛կ, խոտովանող եւ
ապաշխարող ծառաները մկրտելէդ յետոյ՝ Տէրն ալ մր-
կրակ . ժամանակ հասաւ, որ Աստուածորդին յայտնէ :

զինքն աշխարհի : Իսկ Մկրտիչ ծառային սիրաբար սարսա-
 վով լեցուած դողալով սկսեց հրաժեշտ տալ . — Դու
 Տէր, որքիչ եւ մաքրիչ տիեզերաց Աստուած, շատ եւ
 բաւական չէ այդ քո անձառ խոնարհութիւն . երկինքէն
 մինչեւ գետին զիջանիլ . լոյսդ համառօտիւն, արդ այդ նը-
 սեմ մարմնոյդ մէջ պարածածկուած . քո փառաց գերա-
 հրաշ կառքը Տապանակ ուխտին էր, երբեմն սարսելով
 հազիւ կ կրէին թեւերուն վերայ հին օրինաց քահանա-
 ները . իսկ այժմ առանց քո անուանակից Յեսուին, առ-
 անց երկոտասան բանակ բազմաթիւր ժողովրդոց Իսրայ-
 էլի, առանց տապանակակիր քահանայից . անփառու-
 նակ միտցնիկ Յորդանանու գետին քովը իբրեւ մարդ կը
 շրջիս : Տէր, թող այդ խնդիր, ես քո կարապետ ծառան
 եմ՝ մարդ եւ ախտաւոր մարմին . առաւել պէտք է ինձ
 քեզմէ մկրտիլ, դեռ ես ալ անջուր անապատէն նոր ի-
 ջած առանց մկրտութեան եմ : Մկրտութիւնը մեղքերը
 կ լուանայ . իսկ դու անմեղ անարատ Աստուծոյ գառն
 ես, բոլոր աշխարհի մեղքերը պիտի բառնաս եւ ախտաւոր
 մարդիկները պիտի լուանաս հոգիածին եւ նորոգատուր
 աւազանին ծոցը : Ի՞նչ պիտի լինի արդեօք քո այդ չափ
 խոնարհութեան խորհուրդ . Տէր, ափշած, եւ զարմացած
 եմ :

— Ինչո՞ւ կափշիս եւ կ զարմանաս, Յովհաննէս ծառայ
 իմ, մի թէ դուն ալ քո Հրէական ազգին պէս աշխար-
 համբա ոգւով Երուսաղէմի փրկիչ Յիսուսը մարդկօրէն
 փառքի մէջ կ խնդրես . չէ այդ պէս չէ, Յիսուսի Աստու-
 շածութեան փառքը իւր խոնարհ մարդկութեան կ :

1005 / 2077 / 17099-58



պարանքն է : Թող տուր առ այժմ այսպէս պէտք է բո-
ւոր արդարութեան պարտքիս կատարեմ . այսպէս պիտի
ընթանամ Քեթիկէմի մարէն մինչեւ Գողգոթային խա-
չը եւ մինչեւ ի գերեզմանին դուռը :

Իսկ կամակատար ծառայն Յովհաննէս գիտնալով որ
Տիրոջ մարդեղութիւնը խոնարհ կերպարանքին տակ
Թագուցեալ խորհուրդ մի է . ուստի հնազանդելով կը
մըտնէ Յորդանանին մէջը . բայց այն լնչ խաչանուէր
Քահանայն Յիսուս Աստուած իւր մարմնազգեցիկ ոտքը
կը կոխէ գետին եղերքը , բարէ , Յորդանան առաւել քան
զՄկրտիչ հրաժեշտ աւելով կսկսի դէպ ի վեր դառնալ
գարիւ գարիւ բարձրանալով : Գաւթին ալ մտն կեցած
կ կանչէր « Չի է քեզ ծով , զո՞ տեսեր եւ փախտար .
կամ դու Յորդանան , զի դարձար անդրէն » : Ա տեսնայ
նոյն հրաշագործող Աստուածը չէ թէ ինչպէս երթիմն
տապանակակիր Քահանայից ոտքով իմ յորդախաղայքն .
Թացքը դէպ ի վեր կ յեղաշրջէ . այլ իսկ իւր խոնարհ
մարդեղութեան ոտքով մանաւանդ թէ ամբողջ կուսու-
ռիկ մարմնով իմ ծոցիս մէջը կ մտնի . եւ ինչպէս կարեմ
ժուժել հանդուրժել իմ սահուն ալիքներով , մինչդեռ
Մկրտիչ ծառայն ալ Տիրոջ մէնտարաւիստ փախուտ կու-
տայ : Իսկ Յիսուսը կ ձայնէ փախչող Յորդանանու ետե-
ւէն . « Գետ , մի գարհուրիր , քո արարիչն եմ ես . եկեալ
մկրտիմ եւ լուանամ զմեղս » : Այսպէս ծառայն եւ
Տէրը ի միասին կ մտնեն Յորդանանին մէջը , կսկսի Մը-
կրտիչն հողաստեղծ ձեռքով ջուր անել այն գերագոյն
գագաթան վերայ . որ կապուտ երկնքէն եօթնպատիկ

վեր է ամենաբարձր Աստուածութեամբ : Անաղտ եւ
 ամբիժ մարմնը պէտք չունէր բնաւ մաքրութեան
 կամ Յորդանիսին սրբիչ աւազանին ջրով երկար լը-
 վացուիլ : Ուստի վաղվաղակի ջուրէն դուրս կելնէ . եր-
 կինքը կ պատուի . Աստուծոյ Հոգին, որ խկզբանէ անտի
 ջուրին վերայ կ շրջէր՝ նոյն իւր փառակցին վերայ կիջ-
 նայ աղաւնակերպ երեւոյթով . Հայր Աստուածն ալ ա-
 հարկու ձայնով երկինքէն կ կանչէ . որպէս զի Հրէաստա-
 նի խուլ եւ համր ժողովուրդը լսէ : « Դա է խկական
 որդի իմ, ի յաւիտենից ծնեալ՝ երկինքէն իջերէ, երկրէն
 չէ . մի տարակուսիք երբ կ տեսնաք զինքն խոնարհ կեր-
 պարանքով այդպէս իբրեւ մարդ երեւցած . խուլ մի լի-
 նիք, բայէք ձեր անհաւան ականջները մտադիւրու-
 թեամբ լսեցէք ինչ որ կաւետարանէ եւ կ քարոզէ ձեզ :
 Իւր ամէն խօսքերը ճշմարիտ են . վասն զի ստոյգ Աս-
 տուծոյ որդի է . յաշխարհ զրկեցի, որպէս զի մարդիկները
 եկինքը հրաւիրէ . իր անձնէն բան մի չի խօսեր ամէն
 պատուէրները ինձմէն առած է . դորա այնչափ խոնար-
 հելուն վերայ մի զարմանաք յերկինքէն ապստամբած հին
 թշնամւոյն ամբարտաւանութիւն խորտակելու համար՝
 խոնարհութիւն պէտքեր . դա այժմ կ տեսնաք իբրեւ տը-
 կարութեամբ զգածեալ մարդը կ շրջի աշխարհի մէջը .
 բայց աշխարհի իշխանին պիտի յաղթէ իւր մարդեղու-
 թեան տկար զէնքերով պիտի յօժարութեամբ համբե-
 րէ իւր սիրելի ազգին տուած նախատանայ ու չարչա-
 րանքներուն մինչեւ ի խաչ : Իսկ երբ նորահրաշ Յարու-
 թեամբ իւր յաղթանակը կ տնկէ Գողգոթային դլուխը .

եո ալ զինքն պիտի փառաւորեմ իմ աջակողմս բազմեցնելով՝ անուն պիտի տամ իրեն որ ամէն անունէն բարձր է :

Յովհաննէս Մկրտիչը այս ամէն երկնաձայն պատգամները լսելէն յետոյ՝ մի թէ տարակոյս ունէր Աստուածորդւոյն վերայ որ իւր աշակերտներուն ձեռքով այն հարցումն արաց . « Ի՞նչ ես որ դալոցն ես , եթէ այրումն ակն կալցուք » : Գաւ բնաւ տարակոյս չունէր . միայն թէ իւր աշակերտաց թերահաւատու թիւեր փարատելու համար զիրենք Յիսուսին դիկեց . որպէս զի իւրեանց իսկ աչքով տեսնան այն ամէն Աստուածազօր բարեկէլիքներ . այսինքն կաղերուն ընծանալ , կուրերուն լուսաւորիլ , մեռելներուն յարութիւն առնել եւ այլն . ու հաւատան որ Յիսուս ճշմարիտ Աստուած է եւ այն հրաշքները կարող է բնաւ իրենց վարդապետը գործել :

Այսպէս երանելին Յովհաննէս Յիսուսի Աստուածութեան համար ճշմարտապէս վկայեց . քարոզեց Հրեատանին մէջը . անզեղ մեղաւորները յապաշխարութիւն կանչեց . կշտամբեց օրինազանց Հերովդէս եւ վերջապէս անզգամ Հերովդիտոյ կնոջ ձեռքով բանտը դրուելով գլխատուեցաւ . ինչպէս որ աշխարհի վերայ իբրեւ Արապետ Յիսուսին առաջը գնաց . նմանապէս դժօխքը երթալով աւետիս տուաւ Նախահարց՝ Մեռիային գայլտեան եւ իրենց ազատութեան համար , թէ ես իսկ աչքով տեսայ Աստուծոյ Գառն ձեռքովս մկրտեցի Յորդանան գետի մէջը . ահա պիտի գայ եւ քանդէ սասանային դժօխքը :

ՉԱՔԱԿԱՆ ԴՐՈՒՄՏԻՔ ԱՌ ՅՍՂՀԱՆՆԻՍ ԾԿՐՏԻՉ
ՀԱՆԵԱԼ ԻՆՐԱԻԹԱԿԵՆ ԵՐԿՐԻՆ ԱԻՆՏԵԱՅ

Չ եւ ասրեալ , մանկուէք , ըզձեզ
Փրկչին իծնունդըն Բեթլեհէմ ,
Նախ աստճւած ամել անկ է
մեծին իծնունդըս Յոհաննու ,
Եւ ի ասէն լեռնակողմ
Զաքարիայ քահանային :
Որ զոգջոյն ի տաճարին
առ ընկալաւ նախ քան ըզկոյսն ,
Քարբիէի աւետեօք
Ճնանիլ ամլոյն Եղիսարեթ :

Այս ասա ելեալ գիմէր
Սոյսըն յղի Հոգւոյն շնորհիւ
Տալ զոգջոյն տոհմակից
մօր Մկրտչին երկցայոյն .
Նա եւ իլո՛ւր ամուլ ծնողին
պատմել բանիւ ուրախական ,
Զաւետեանցըն հրաշալուր
ազդեալ ինքեան ի հրեշտակէն .
Մինչ մեղմիկ ձայն ողջունի
յունկըն հրնչէր պառաւ ամլոյն
Ընդ ինքրբուստ լսէր ծառայն
եւ կայր յողջոյն Տեառն առաջի .
Եւ նկատիչ լեալ Լուսոյն

յարգանդ Կուսին տաղաւարեալ
Յնծալով խայտայր խաղայր
ընդ այն գալուստ Փրկչին յաշխարհ .
Եւ խոնարհեալ յորովայնէ
ի յորովայն երկըրպագէր
Վարապետն յառաջընթաց ,
լցեալ հոգովն Աստուածեղէն .
Հրաշանար ընդ այս յաւէտ
մայրըն մանկան Եղիսաբեթ ,
Նոյն հոգւով լըցեալ եւ ինքն
աղաղակէր ձայնիւ առ Վոյսն .
Օրհնեալ ես ի կանայս ,
ով դու լուսոյդ մայր Մարիամ ,
Որ ընդ մէջ մարմնոյդ անբիծ
իբրեւ ի տուն տաղաւարի .
Օրհնեալ է եւ այդ պրտուղ ,
որ յորովայնըդ քո բուսեալ
Պարգ եւ ի բանաւորաց
համեղ ճաշակ անմահական :

Մինչ մերձէր ժամ ծագելոյ
արուսեկին ծնընդեամբ յաշխարհ
Տեղի տալ Մօր Արեւուն՝
Ժրտէր սիրով Եղիսաբեթ ,
Որ անդրէն դառնայր աստուտ
ուրախ ի տուն իւր Նազարէթ .
Քանի՞օն մեծ խնդուծեան
հանդ էս լինէր սատէն , մանկունք ,

Ի ծնանել ամուլ ծերոյն
զանհամեմատն ի ծնունդս կանանց,
զև ըկրրախն Աստուածորդւոյն
մաքուր տառակն անապատի.
Ի Քրիստոսի բերանոյն
ըզդրուտեալն արժանապէս.
Թէ մե՞ծ ոք յորդուոց կանանց
չէ յարուցեալ քան զՅովհաննէս,
Որ անուամբ ընտրհագեղ
բաց ըզլեզուն պապանձեալ հօրն,
Յորժամ զըծեաց ի տախտակին
ըզտարփախի ձայն Յովհաննէս.
Զարմացան տեսողք հրաշիս,
եւ որ լուան զլուր նորասբանչ,
Ափշեալ գուշակէին,
զի՞նչ լինիսի մանուկս այս.
Մարցարէ Բարձրելոյն
առ ի Հօրէն անուանեցաւ,
Երթալով Տեառն առաջի
եւ զառապարս հորդ եւ շաւիղ,
Զանպատրաստ ոգիս մարդկան
գող դիւր եւ հարթ Քրիչին ոտից.
Նա՛ հանգոյն արուսեկին
ընդ մերձ այգւոյն ծագեալ պայծառ,
զԳերարփուոյն աւետիս ետ.
որ՝ Սուսէն հրաշածագէր.
Ղօղեցաւ յանապատին

ըզառաւ իղս ամփոփելով ,
Ում զուարթունք ի վերուստ
առաքեցան ի սպասաւոր
Պահպանել ըզցանկային
մինչ ի լըրումն երեսնամի օ
Զօրէն Եղիային
վարս ստացաւ ըզհրեշտակաց .
Մաշկեղէն գօտի ընդ մէջ
եւ ի ստեւոյ ուղտու հանդերձ .
Վայրենի մեղր եւ մարախ
պարէն առեալ մարմնոյն ի պէտս օ
Այնչափ գերայ ունի
վիճակեցաւ նորոյ շնորհաց .
Մինչ եռամ ճնեայ Աստուածու թեան
տեսող եղեւ ի Յորդանան օ
Խորհրդեան մարմնազգեցին ,
ու մցանկային հեռուստ գուշակք .
Ընդ աղօտ տեսող եղոն
բանին մարմնով թանձրացելոյ օ
Այլ մրկըրտիչն Աստուածորդւոյն
մարմնոյն աչօք հուպ նկատեալ .
Յոյց մատաւր ինքն ի մօտոյ
զգառն Աստուծոյ բարձող մեղաց օ
Եւ իւրոց աշակերտացն
ի բաց մերժեաց զաարակոյսն օ
Անշուշտ վկայելով
վասըն նորին Աստուածու թեանն .

Ես չեմ, ապա, քրիստոս,
այլ ընդ առաջ նորա հրեշտակ .
Զայս իսկ առ իմ ճառեաց կանուխ
տեսողն անդուտ Մաղսքիան .
Որ ունի զհարսն անարատ,
ըզնորածնեալ Եկեղեցին .
Այն է ահա փեսայն անախտ
առ սէր հարսին իջեալ յերկնից .
Մայն ես հարսնաւէր
եւ բարեկամ եմ փեսային .
Ի հանդէս այս հարսանեաց,
վա՛շ, փեսային ցրեծամ ճայնիւ .
Որ եւ այս ուրախութիւն
սրբոյս իմոյ լըցաւ իսպառ .
Ժամ է ածիլ արդ նրմա
մեծ զօրութեամբն Աստուածային ,
Այլ ինձ մեղմանալ յոյժ
առկար բնութեամբս մարդկային .
Ես նրման գիշերայնոյ
փոքրիկ աստեղն աղօտանշոյլ
Երեւեցայ նրւազ լուսով
դոյզըն բանիւ քարոզութեան .
Եւ ի գալ առաւօտեան
պայծառ արմուշն աշխարհալոյս .
Ուստի արդ ես ի նորին
ճառագայթիցն աղօտանամ :
Սա գինարբու օրինամերժ

Հերովդէսին լեալ կըշտամբիչ ,
Նա վասն այն խընդբէր հընարս
գործել ըզդաւ մահու նըմին .
Պատկառեալ ոչ յանդըզ նէր
ի յանարատ նորին վարուց ,
Թաթաւել զձեռն իւր յարիւն
յանդիմանչին իրաւապէս :
Աւա՛ղ , ի ձեռն անպարկեշտ
կնոջըն մատուեալ զուր ի զընդան ,
Վաքաւմամբ լըկտի դստերն՝
դահճին սըրով գըլխատեցաւ :
Այսպէս ի ջուր Մըկըրտիչ ն ,
ինքն ի յարիւն իւր մըկըրտեալ .
Ճրագին այն զեղանըշոյլ
լոյս առ աշխարհ աղօտացաւ :
Եւ այսու բանտն ի խաւար
դնացեալ ելոյց դարձեալ ըզնա ,
Յընծու թեան աւետատու .
լեալ անդ հոգւոցըն վտարանդի .
Որ ի ստուեր մահու նըստեալք
փըրկող աջոյն ըսպասէին :
Մինչ ըզձա՛ն Վարապետին
լուան աւետեաց ոյս նորալուր
խընդացին Նահապետք
եւ գուշակաց գունդբըն բողոք :
Այսպէս նախընթաց
եղեւ յերկրի եւ ի դըթոխս

Սանխաղ ինն տալով նրչան
ըզփրկողին գալթատենէն .
Սովիմբ ինքքն ցուցաւ
վեհ ի ծառայօրն Քրիստոսի ,
Եօթնեկի խորհրդական
գլտաւ անուանց արժանաւոր .
Յովհաննէս յորջորջելով ,
բացող եղեւ կարկեալ լեզուին ,
Մըկրտոսիչ՝ ի Յորդանան
գԱստուածորդին մըկրտելով ,
Մարգարէ վերջին գոլով
Մարգարէ իցըն նախատես ,
Առաքեալ՝ ի նոր քարոզ
լեալ ինքն ըսկիզբն Առաքելոցն ,
Սարապեա՝ իջելոյ
Բանին յաշխարհ յառաջընթաց ,
Մարտիրոս՝ մարմնովըն իւր
նահատակեալ ի մէջ բանտին .
Աւետիս՝ գոլ ի դըժոխս
աւետատու գերեալ հոգւոցն .
Սիւսանայի շնորհագործ
տնօրէնու թեան Մարգարեւոյն ,
Դու եւ եթ ըսպատաւոր
ի Սուրբ Հոգւոյն որոշեցար ,
Յիսուսին սերտ բարեկամ
եւ մըտերիմ սուրբ Յովհաննէս .
Ար ըզկնի երջանիկ Մօր

եւ ընտանեոյն Աստուածամեծի
 Յաւէտ սիրելի
 ցուցար բանին մարմնացելոյ •
 Լեր ուրեմն ընդ Տիրուհւոյն
 դու առ Քրիստոս աղերսարկու •
 Չմանկանց եկեղեցւոյ
 հրաւիրելոցս ի քո տաճար •
 Նա՛ վասն իմ անարժանիս
 զքեզ երգող անուանակցիս •
 մաղթեմ լինիլ առաջնորդ
 քեւ ընդուսել շնորհս Յիսուսէն •
 Այ՛ եւտ ինձ զմեծարեալդ
 առ ի նմանէ երգարանել •



THE UNIVERSITY OF CHICAGO

PHYSICS DEPARTMENT

REPORT OF THE PHYSICS DEPARTMENT
FOR THE YEAR 1954-55

BY THE DEPARTMENT

CHICAGO, ILLINOIS
1955

PHYSICS DEPARTMENT

CHICAGO, ILLINOIS
1955

CHICAGO, ILLINOIS
1955

ԲՈՎԱՆԻ ԱՎՈՒԹԻՒՆ ԳԼՈՒԹ

ՖԼՈՒԽ Ա .


ԱԻԵՏԻՔ ԵՒ ՍՋԱՆՁԵԼԻ ԾՆՈՒՆԴ ՍՐԲՈՅՆ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՁԻՆ 1

ԳԼՈՒԽ Բ .

ԱՆԱԳԱՏԱԿԱՆ ՎԵԱՆՔ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԱՐԱ
ՊԱՏԻՆ ԵՒ ԲԱՐՈՋ ՈՒԹԻՒՆ ՆՈՐԱ ԻՅՈՐԻԱ
ՆԱՆ 6

ԳԼՈՒԽ Գ .

ՄԿՐՅԱԿԹԻՒՆ ՅԻՍՈՒՍԻ ԵՒ ԳԼՈՒՏՈՒՄՆ
ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԿՐՏՁԻՆ ԻԼԵՐՈՎԴԻՍԻՆ . 16



ՉԱՓԱԿԱՆ ԳՐՈՒԱՏԻՔ ԱՐ ՅՈՎՀԱՆՆԵՑ
ՄԿՐՏԻՉ ՀԱՆԵԱՆ ԻԿՈՒԿԱԿԻՆ ԵՐԿՐԻՆ
ԱԻԵՏԵԱՑ 21

